ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 19.04.2019թ.)

Քննելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանի կողմից 16.04.2019թ. ներկայացված և 18.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/03 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանը (այսուհետ՝ Բողոքաբեր) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարութան կարիքների համար հայտարարվել է «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ): Ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. մարտի 20-ը, ժամը 12:00-ն:

Բողոքաբերը գտնում է, որ «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրեն ձեռք բերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ տեղիք տալով տարակերպ մեկնաբանությունների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի

բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա...:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը, Բողոքաբերը գտնում է, որ դրանք կազմվել են՝ խախտելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի պահանջները: Տեխնիկական բնութագրերի որոշ հատվածներում բացակայում են ծառայությունների հստակ նկարագրությունը, գնման առարկայի հատկանիշներին վերաբերող պայմանները հստակ նկարագրված չեն, ինչը հանգեցնում է մասնակիցների շրջանակի նվազում և գնման գործընթացի խտրական կազմակերպում:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման

հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը դեռևս ավարտված չէ (վերջնաժամկետը՝ 20.03.2019թ., ժամը 12:00), իսկ սույն բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուստի ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին Բողոքաբերը խնդրել է պարտավորեցնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարութան կարիքների համար հայտարարված «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված գնման ընթացակարգը:

Ի լրումն բողոքի՝ ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանը ներկայացրել է գրություն, որով հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի տեխնիկական բնութագրերի որոշ հատվածներում բացակայում են ծառայությունների հստակ նկարագրությունը, գնման առարկայի հատկանիշներին վերաբերող պայմանները հստակ նկարագրված չեն, ինչը հանգեցնում է մասնակիցների շրջանակի նվազման և գնման գործընթացի խտրական կազմակերպման, մասնավորապես.

1. Ընթացակարգի հրավերով մի շարք հատվածներում տարբեր միջոցառումների կազմակերպման դեպքում սահմանվել է՝ «ըստ անհրաժեշտության ֆերմաների ապահովում»:

Նշված «ըստ անհրաժեշտության ֆերմաների ապահովումը» պահանջը հանդիսանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահաջների խախտում, քանզի անհասկանալի է, ի վերջո, ֆերմաների ապահովում պետք է լինի և երբ կարող է առաջանալ դրա անհրաժեշտությունը:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամները կայցելեն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին հայտ ներկայացրած քաղաքներ, տեղերում կուսումնասիրեն և կիրականացնեն հայտերի գնահատումը: Քաղաքներ այցելության ժամանակացույցը կսահմանի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեն:

Մատակարարող կազմակերպությունը կիրականացնի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամների այցելությունները հայտատու քաղաքներ, նրանց սննդի և ըստ անհրաժեշտության կեցության ապահովումը:

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

Կեցության և սննդի ապահովում 15 մարդու համար ըստ անհրաժեշտության կախված հայտատու քաղաքների թվից և վայրից (Երևանից 200 կմ և ավել հեռավորության դեպում կեցության ապահովում, իսկ մոտիկ քաղաքների դեպում միայն սննիդի ապահովում), (մեկտեղանոց, մահճակալով հարմարավետ սենյակներում).

Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ այուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ կամ սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ կամ սուրճ) և ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ կամ սուրճ):

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ընտրության նպատակով տեղի կունենա կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկությունը: (Քվեարկության կազմակերպումն ապահովելու է մատակարարող կազմակերպությունը:)»

Վերոհիշյալից հստակ պարզ է դառնում, որ մասնակիցը որևէ տեղեկություն չունի, թե որոնք են լինելու հայտ տված քաղաքաները (ինչպես նաև քանի քաղաք՝ 12, 5, 8, 10), ինչ հեռավորության վրա են գտնվելու, որպեսզի հնարավոր լինի հաշվարկել նաև տրանսպորտային միջոցի ծախսը, պատկերացնել, թե քանի քաղաք պետք է կազմակերպվի այցելություն, քանի անգամ սննունդ և վերջապես, իմանալով քաղաքների հեռավորությունը՝ պարզել, թե արդյոք պետք է ապահովվի կացությունը հյուրանոցում, թե ոչ, քանզի հրավերի համաձայն՝ Երևանից 200 կմ և ավել հեռավորության դեպում կեցության ապահովում է պահանջվելու: Նաև սահմանված չէ, թե օրվա մեջ սննունդը քանի անգամ պետք է ապահովվի, և կեցությունը, եթե անհրաժեշտ է, ապա քանի օր:

Մինչդեռ «Գնումների մասին» 13-րդ հոդվածը խստիվ պահանջում է, որպեսզի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, ինչը Հրավերի նման վերացական սահմանման դեպքում այն հստակ հակասում է Օրենքի վկայակոչված պահանջներին:

3. Հրավերի համաձայն՝ քաղաքային նշանակության «Երիտասարդները հանուն համայնքի»ծրագրի իրականացման շրջանակներում մատակարարող կազմակերպությունը կապահովի 4 ժամյա տևողությամբ հանդիպման 2 բանախոսներին և հանդիպման արդյունքում երիտասարդների առաջարկներից ձևավորված փաթեթի էլեկտրոնային տարբերակը (ներառյալ դիզայն (համաձայնեցնել Նախարարության հետ) և պատրաստում):

2 բանախոսներ 2 բանախոսների ապահովում 4 ժամ տևողությամբ հանդիպմանը՝ հանդիպումը վարելու համար:

Անհասկանալի է, թե նշված բանախոսներին ով պետք է ապահովվի՝ Նախարարությունը, թե կատարողը:

4. Հրավերով սահմանված չէ, թե միջոցառումների անցկացման դահլիճները (քանի որ պետական դահլիճն են, օրինակ Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն, Ստեփան Զորյանի տուն-թանգարան) տրամադրվելու են Նախարարության կողմից, թե ընկերությունն է վարձակալելու:

Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա...:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը, Բողոքաբերը գտնում է, որ դրանք կազմվել են՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածի պահանջները: Տեխնիկական բնութագրերի որոշ հատվածներում բացակայում են ծառայությունների հստակ նկարագրությունը, գնման առարկայի հատկանիշներին վերաբերող պայմանները հստակ նկարագրված չեն, ինչը հանգեցնում է մասնակիցների շրջանակի նվազում և գնման գործընթացի խտրական կազմակերպում:

Ավելին, Ընթացակարգի հրավերի նշված անհստակությունը և տարակերպ մեկնաբանություն անելու հնարավորությունը հանգեցրել է նրան, որ մասնակիցների կողմից առաջարկվել են միմյանցից էականորեն տարբերվող գնային առաջարկներ, ինչ էլ իր հերթին հանգեցրել է մրցակցության սկզբունքի խախտմանը, քանզի մասնակիցները իրականում չէին կարող ճիշտ հաշվարկել իրենց գնային առաջարկը և ներկայացնել մրցակից գին:

Այսպես, մասնակիցների կողմից առաջարկվել է 5 մլն մինչև 49 մլն ՀՀ դրամ գին՝ նույն ծառայության համար:

Հատկանշական է, որ նշված Ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է 59 մլն ՀՀ դրամ: Ընդ որում, www.armeps.am համակարգում Ընթացակարգի նախահաշվային գինը նշելիս՝ Պատվիրատուն նույնպես թույլ է տվել թերություն՝ մասնավորապես, նշվել է ընդհանուր գին՝ 59 047 996 ՀՀ դրամ, և միևնույն ժամանակ նշվել է միավորի գին՝ 25 115 080 ՀՀ դրամ, իսկ նշված Ընթացակարգում առկա չէ միավոր: Սա նույնպես մասնակցի մոտ գինը որոշելիս, կարող էր թյուրիմացության տեղիք տալ:

ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով և ի լրումն բողոքի գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 23.04.2019թ. թիվ 5/08/5199-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայության ձեռքբերման նպատակով «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հրավերի տեխնիկական բնութագրով հստակ նկարագրվել է ձեռք բերվող ծառայության բնութագիրը ըստ փուլերի: Իսկ ինչ վերաբերում է ծառայության ձեռքբերման և վճարման պայմաններին, ապա հայտի վճարման ժամանակացույցում դրանք հստակ նշված են:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ վերոնշյալ հայտի «տարակերպ» մեկնաբանությունները հասկանալու համար մրցույթի մասնակիցը կարող էր դիմել նախարարությանը՝ խնդրելով պարզաբանում, ինչը մրցույթի մեկ այլ մասնակցի կողմից իրականացվել է:

Պարզաբանումը հրապարակվել է Նախարարության կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման համար դիմել են 5 կազմակերպություն, և եթե խնդրո առարկա դարձած տեխնիկական բնութագիրը կազմված լիներ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ապա հնարավոր չէր լինի նաև 5 կազմակերպությունների մասնակցությունը մրցույթին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար«ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 23.04.2019թ. թիվ 5/08/5199-19 գրությունը, «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կարիքների համար «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

տեխնիկական բնութագիրը
«ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում, երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների իրականացում» միջոցառման անցկացում
Ծրագրի նպատակն է նպաստել տարածքային համաչափ զարգացմանը, մարզերում երիտասարդական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը: Ծրագրի իրականացման շրջանակներում Մատակարարող կազմակերպությունը մշակելու է 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ոճն ու տարբերանշանը, որը օգտագործվելու է Ծրագրի շրջանակներում բոլոր տպագրական և գովազդային նյութերի վրա: (Համաձայնեցնել Նախարարության հետ) Մատակարարող կազմակերպությունն իրականացնելու է նաև Ծրագրի բոլոր փուլերի նկարահանումը և պատրաստելու է «2019 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի վերաբերյալ ամփոփիչ ֆիլմ, որը ցուցադրվելու է Ծրագրի երրորդ փուլում՝ փակման արարողության ժամանակ: Նակարահումներն իրականացվելու են 4K ֆորմատով: Ֆիլմը պատրաստվելու է սինխրոն նկարահանումներով և անիմացիոն լուծումներով: Ծրագիրը կիրականացվի երեք փուլով: ***Ծրագրի առաջին փուլում*** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքում՝ Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում տեղի կունենա Հայաստանի Հանրապետության 2019 թվականի

երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողությունը:

Միջոցառմանը կմասնակցեն «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամները, ինչպես նաև այլ հյուրեր՝ ընդհանուր 19 մարդ և Հայաստանի Հանրապետության 2018 թվականի երիտասարդական մայրաքաղաք Իջևանի ներկայացուցիչները:

Ուղևորափոխադրում Երևան-Վանաձոր-Երևան 19 մարդու համար

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողության ժամանակ ողջույնի խոսքով հանդես կգան երիտասարդական քաղաքականության պատասխանատուները, Վանաձոր և Իջևան համայնքների ղեկավարները: (Ծրագրի այս մասն իրականացնելու է Նախարարությունը):

Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաքի խորհրդանշական բանալին Իջևան քաղաքը կհանձնի Վանաձոր քաղաքին: (Ծրագրի այս մասն իրականացնելու է Նախարարությունը)

Կներկայացվեն «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի նպատակն ու խնդիրները: (Ծրագրի այս մասն իրականացնելու է Նախարարությունը)

Տեղեկատվություն կտրամադրվի 2019 թվականին Նախարարության կողմից նախատեսված միջոցառումների և ծրագրերի մասին: (Ծրագրի այս մասն իրականացնելու է Նախարարությունը)

Միջոցառումը կշարունակվի 40 րոպե տևողությամբ ջազային կամ էստրադային համերգային ծրագրով՝ ներառյալ բեմի ձևավորումը, ձայնային տեխնիկայի, լուսային համակարգի և ըստ անհրաժեշտության ֆերմաների ապահովումը:

Բեմի ձևավորում՝

պաստառ 2 հատ՝ չափերը 4մ x1.5 մ տպագրված Ծրագրի տարբերանշանով, ձախ և աջ կողմից ձևավորելու համար,

պաստառ 4 հատ չափսը՝ 4մ x1մ ֆերմաների ձևավորման համար

Ամբիոն ձևավորված պաստառով:

լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT – 1 հատ,
- ծխի ապարատներ - 2 հատ,
- ստատիկ լույս PAR 64 - 4 հատ,

ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար՝

- բարձրախոսներ 10 KWATT հզորությամբ (Passive Line Array System) Seismic Audio, JBL,
- մոնիտորային դինամիկներ՝ RMS 300 WATT 8 հատ (JBL, Seismic Audio),
- թվային վահանակ 32 ալիքի համար (YAMAHHA-32)՝ համերգի ձայնագրման հնարավորությամբ,
- միկրոֆոն (SHURE SM-58, SHURE SM-57, SHURE BETTA-58, BETTA-57, AKG D7, AKG D5, SENNHESER EW100 G3) 12 հատ լարով, 2 հատ հեռակառավարվող, միկրոֆոնի տակդիր - 14 հատ),
- միկրոֆոն հարվածային գործիքների համար - 1 հավաքածու,
- ակսեսուարներ՝ նախատեսված բաս կիթառի և սոլոկիթառի համար (Marsshal 300 watt bass amp combo):

Ըստ անհրաժեշտության Ֆերմաների ապահովում՝

Ալյումինե ֆերմաներ 6մ բարձրությամբ 8մ լայնությամբ և 6մ խորությամբ:

Բոլոր մասնակիցներին կբաժանվեն Վանաձորը 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաք խորհրդանշանով

եռագույն ժապավենով կրծքանշաններ, փուչիկներ և դրոշակներ: Ընդհանուր 100 հատ, (դիզայնը համաձայնեցնել Նախարարության հետ:)

100 հատ կրծքանշան եռագույն ժապավենով՝

պլաստմասե կրծքանշան միջին չափի՝ տպագրված Ծրագրի տարբերանշանով, իսկ եզրը եռագույն ժապավեն:

100 հատ փուչիկ

Փուչիկների վրա տպագրված Ծրագրի տարբերանշանը, գույնը քննարկել Նախարարության հետ:

100 հատ եռագույն դրոշ փոքր չափի փայտիկով:

Քաղաքի տարբեր վայրերում կտեղադրվեն տարվա երիտասարդական մայրաքաղաքի վերաբերյալ ցուցապաստառներ

4 հատ պաստառներ՝

Չափերը՝ 3մ x 6մ, տպագրված Ծրագրի լոգոյով Վանաձորը որպես երիտասարդական մայրաքաղաք ձևավորելու համար: Պաստառների փակցնելու վայրերը քննարկել Նախարարության հետ:

Ծրագրի երկրորդ փուլում Նախարարության կողմից կհայտարարվի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը:

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամները կայցելեն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին հայտ ներկայացրած քաղաքներ, տեղերում կուսումնասիրեն և կիրականացնեն հայտերի գնահատումը: Քաղաքներ այցելության ժամանակացույցը կսահմանի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեն:

Մատակարարող կազմակերպությունը կիրականացնի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի և փորձագիտական հանձնաժողովի անդամների այցելությունները հայտատու քաղաքներ, նրանց սննդի և ըստ անհրաժեշտության կեցության ապահովումը: (Առավելագույնը 15 մարդ):

Ուղևորափոխադրում Երևան-հայտատու քաղաքներ-Երևան 15 մարդու համար

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

Կեցության և սննդի ապահովում 15 մարդու համար ըստ անհրաժեշտության կախված հայտատու քաղաքների թվից և վայրից (Երևանից 200 կմ և ավել հեռավորության դեպում կեցության ապահովում, իսկ մոտիկ քաղաքների դեպում միայն սննիդի ապահովում)

(մեկտեղանոց, մահճակալով հարմարավետ սենյակներում),

Սնունդը՝ նախաճաշ (կարագ, պանիր, հաց, հիմնական ուտեստ (նրբերշիկ կամ այուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ կամ սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ կամ սուրճ) և ընթրիք (հաց, լոլիկ, վարունգ, 2 տեսակի աղցան, հիմնական ուտեստ՝ խավարտով ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ կամ սուրճ):

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ընտրության նպատակով տեղի կունենա կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկությունը: (Քվեարկության կազմակերպումն ապահովելու է մատակարարող կազմակերպությունը:)

Ծրագրի երկրորդ փուլի ընթացքում Վանաձորում կիրականացվեն նաև «Հայաստանի Հանրապետության 2019

թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթին Վանաձոր քաղաքի կողմից ներկայացված, Նախարարության հետ համատեղ իրականացվող երեք միկրոծրագրերը՝ քաղաքային, մարզային և համապետական նշանակության:

Քաղաքային նշանակության «Երիտասարդները հանուն համայնքի» ծրագիր.

Քաղաքային նշանակության «Երիտասարդները հանուն համայնքի» ծրագիրն իրականացվելու է Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարանի այգում: Տեղի է ունենալու մեկ օրյա հանդիպում-քննարկում, որին մասնակցելու են Վանաձորից 30 երիտասարդներ, որպես բանախոսներ հանդես են գալու ոլորտի առաջատար մասնագետները: Հանդիպման ընթացքում քննարկվելու են համայնքի զարգացմանն ուղղված երիտասարդների առաջարկները, հանգամանալից ներկայացվելու են ֆոնդահայթայթման ժամանակակից մեխանիզմներն ու դրա օգտավետությունը:

Քաղաքային նշանակության «Երիտասարդները հանուն համայնքի» ծրագրի իրականացման շրջանակներում մատակարարող կազմակերպությունը կապահովի 4 ժամյա տևողությամբ հանդիպման 2 բանախոսներին և հանդիպման արդյունքում երիտասարդների առաջարկներից ձևավորված փաթեթի էլեկտրոնային տարբերակը (ներառյալ դիզայն (համաձայնեցնել Նախարարության հետ) և պատրաստում):

2 բանախոսներ

2 բանախոսների ապահովում 4 ժամ տևողությամբ հանդիպմանը՝ հանդիպումը վարելու համար:

Էլեկտրոնային փաթեթ

հանդիպման արդյունքում երիտասարդների առաջարկներից ձևավորված փաթեթի էլեկտրոնային տարբերակ՝ ներառյալ դիզայնը (համաձայնեցնել Նախարարության հետ) և պատրաստումը:

Մարզային նշանակության «SS-ն հանուն համայնքների զարգացման հէքըթոն» ծրագիր.

Մարզային նշանակության «SS-ն հանուն համայնքների զարգացման հէքըթոն» ծրագիրն իրականացվելու է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում՝ 2 օր անընդմեջ: (Ծրագրի իրականացման օրերը համաձայնեցնել Նախարարության հետ) Ծրագրին մասնակցելու են Լոռու մարզի տարբեր համայնքներից ժամանած SS ոլորտով հետաքրքրվող թվով 30 երիտասարդ:

Մարզային նշանակության «SS-ն հանուն համայնքների զարգացման հէքըթոն» ծրագրի շրջանակներում մասնակիցների և հյուրերի (ընդհանուր 40 մարդ) համար Մատակարարող կազմակերպությունը կապահովի ֆուրշետի, սուրճի ընդմիջման (քաղցրավենիք, միգ, կանապե, հյութ, ջուր, սուրճ, թեյ) կազմակերպումը, ինչպես նաև մասնակիցներին (30 մասնակից) անհրաժեշտ համապատասխան տպագրությամբ փաթեթները (թղթապանակ (ռետիններով, A4 չափի, գույնը՝ կապույտ), նոթատետր (A5 չափի, 70 թերթ, վերևից պարույրով, վանդակավոր), գրիչ (կապույտ, գնդիկավոր, թափանցիկ պլաստմասե կաղապարով), անվանաքարտ, շապիկ, գլխարկ) (տպագրության տեքստը և դիզայնը համաձայնեցնել Նախարարության հետ):

Ֆուրշետ և սուրճի ընդմիջում 40 մարդու համար

Առաջին օրը սուրճի ընդմիջման կազմակերպում- 1 անգամ՝ քաղցրավենիք, հյութ, ջուր, սուրճ, թեյ:

Երկրորդ օրը ֆուրշետի կազմակերպում- 1 անգամ՝ քաղցրավենիք, միգ, կանապե, հյութ, ջուր, սուրճ, թեյ:

Փաթեթներ՝ տպագրությամբ, 30 մասնակցի համար

Թղթապանակ՝ ռետիններով, A4 չափի, գույնը՝ կապույտ,

Նոթատետր՝ A5 չափի, 70 թերթ, վերևից պարույրով, վանդակավոր,

Գրիչ՝ կապույտ, գնդիկավոր, թափանցիկ պլաստմասե կաղապարով,

Անվանաքարտ՝ ժապավենով,

Շապիկ՝ սպիտակ, կարճաթև, համապատասխան տպագրությամբ

Գլխարկ՝ սպիտակ, համապատասխան տպագրությամբ

Համապետական նշանակության «Երիտասարդության ուժը-բաց տարածք» ծրագիր.

Համապետական նշանակության «Երիտասարդության ուժը-բաց տարածք» ծրագրին կմասնակցի 100 երիտասարդ՝ ժամանած ՀՀ տարբեր մարզերից: Համապետական նշանակության ծրագրի ընթացքում նախատեսվում է կազմակերպել «Բաց տարածք» (Open space) մեթոդով երիտասարդական հավաք, որի ընթացքում նախօրոք ընտրված 10 ոլորտների շուրջ ձևավորված խմբերով կքարձրացվեն տվյալ ոլորտում առկա երիտասարդական խնդիրներն ու կառաջարկվեն դրանց լուծման նորարարական տարբերակները: Մասնակիցները առաջարկների հետ մեկտեղ հստակ կնշեն թե ում են ուղղված առաջարկությունները: Բաց տարածքին հրավիրված կլինեն նաև ընտրված 10 ոլորտների փորձագետները, ովքեր խորհրդատվություն կտրամադրեն երիտասարդներին:

Համապետական նշանակության «Երիտասարդության ուժը-բաց տարածք» ծրագիրն իրականացվելու է Վանաձորի «Կիրովական» հյուրանոցում:

Համապետական նշանակության «Երիտասարդության ուժը-բաց տարածք» ծրագրի իրականացման շրջանակներում մատակարարող կազմակերպությունը բացօթյա տարածքում կապահովի 10 ԿՎ հզորությամբ 10 կոմպլեկտ ձայնային տեխնիկան (բարձրախոս, դինամիկ):

Ձայնային տեխնիկա – 10 կոմպլեկտ

10 ԿՎ հզորությամբ 10 կոմպլեկտ ձայնային տեխնիկա՝ բարձրախոս, դինամիկ:

Ծրագրի երրորդ փուլում Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում տեղի կունենա Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողությունը, որին մասնակցելու նպատակով Երևանի հյուրերի Երևանից Վանաձոր և հակառակ ուղղությամբ տեղափոխումը կիարականացնի մատակարարող կազմակերպությունը (ընդհանուր 7 հոգի):

Ուղևորափոխադրում Երևան-Վանաձոր-Երևան 7 մարդու համար

Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, նոր անվադողերով, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ և այլն):

Ողջույնի խոսքով հանդես կգան երիտասարդական քաղաքականության ոլորտի պատասխանատուները, Վանաձոր համայնքի ղեկավարը:

Շնորհակալագրեր կհանձնվեն Վանաձորի համայնքապետարանի երիտասարդական ոլորտի աշխատակիցներին և Վանաձորի երիտասարդական հասարակական կազմակերպությունների այն ներկայացուցիչներին, որոնք 2019 թվականին «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում սերտ համագործակցել են Նախարարության հետ և ծավալել առավել ակտիվ գործունեություն:

4 շնորհակալագիր

Չափսը՝ A4, թղթե, օվսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ,

4 հատ ապակեպատ փայտե շրջանակ A4 չափի

Միջոցառումը կշարունակվի հաշվետու տեսաֆիլմի դիտումով, որում կներկայացվեն հատվածներ բոլոր այն միջոցառումներից ու ծրագրերից, որոնք 2019 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքում:

Ֆիլմը կցուցադրվի համապատասխան էկրանի վրա:

1 Էկրան 3մ x 2մ

Այնուհետև Վանաձոր համայքի ղեկավարը երիտասարդական մայրաքաղաքի բանալին պաշտոնապես կհանձնի Հայաստանի Հանրապետության 2020 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված համայնքի ղեկավարին:

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողության բոլոր մասնակիցներին կբաժանվեն ամփոփիչ սկավառակներ, որում համառոտ կներկայացվեն բոլոր այն միջոցառումներն ու

ծրագրերը, որոնք 2019 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքում

100 հատ սկավառակ - բուկլետներ

Սկավառակների վրա տպագրված << 2019 թվականի երիտասարդական մայրաքաղաքի տարբերանշանը: Սկավառակի պարունակությունը քննարկել Նախարարության հետ

Միջոցառումը կշարունակվի 40 րոպե տևողությամբ ջազային կամ էստրադային համերգային ծրագրով՝ ներառյալ բեմի ձևավորումը, ձայնային տեխնիկայի, լուսային համակարգի և ըստ անհրաժեշտության ֆերմաների ապահովումը:

Բեմի ձևավորում՝

պաստառ 2 հատ՝ չափերը 4մ x1.5 մ տպագրված Ծրագրի տարբերանշանով ձախ և աջ կողմից ձևավորելու համար,

պաստառ 4 հատ չափսը՝ 4մ x1մ ֆերմաների ձևավորման համար

Ամբիոն ձևավորված պաստառով:

լուսային համակարգ համերգի համար՝

- շարժական լույս BEAM R7 230WATT - 10 հատ,
- շարժական լույս LED WASH RGBW 30x12WATT - 6 հատ,
- ստատիկ լույս LED PAR RGBW 54x3 WATT - 4 հատ,
- թարթող լույսեր STROB 2000 WATT – 1 հատ,
- ծխի ապարատներ - 2 հատ,
- ստատիկ լույս PAR 64 - 4 հատ,

ձայնային սարքավորումների համակարգ համերգի համար՝

- բարձրախոսներ 10 KWATT հզորությամբ (Passive Line Array System) Seismic Audio, JBL,
- մոնիտորային դինամիկներ՝ RMS 300 WATT 8 հատ (JBL, Seismic Audio),
- թվային վահանակ 32 ալիքի համար (YAMAHHA-32)՝ համերգի ձայնագրման հնարավորությամբ,
- միկրոֆոն (SHURE SM-58, SHURE SM-57, SHURE BETTA-58, BETTA-57, AKG D7, AKG D5, SENNHESER EW100 G3) 12 հատ լարով, 2 հատ հեռակառավարվող, միկրոֆոնի տակդիր - 14 հատ),
- միկրոֆոն հարվածային գործիքների համար - 1 հավաքածու,
- ակսեսուարներ՝ նախատեսված բաս կիթառի և սոլոկիթառի համար (Marsshal 300 watt bass amp combo):

Ըստ անհրաժեշտության Ֆերմաների ապահովում՝

Ալյումինե ֆերմաներ 6մ բարձրությամբ 8մ լայնությամբ և 6մ խորությամբ:

Ուսումնասիրելով բողոքով ներկայացված խնդիրները և Ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ վերջինս կազմված է գնումների մասին << օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:***

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ այն հստակ չէ, տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս և կարող է հանգեցնել

տվյալ Ընթացակարգին մասնակցելու իրավունքի իրացման անհիմն խոչընդոտների առաջացմանը: Մասնավորապես՝ Տեխնիկական բնութագրի հստակ չլինելը կարող է խոչընդոտել մասնակիցների կողմից մատուցվելիք ծառայության համար գնի ճշգրիտ սահմանմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի մրցակցության սկզբունքի խախտմանը:

Մինդեռ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ....

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Գտնում եմ, որ «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հակասում է գնումների գործընթացի կազմակերպման սկզբունքներին:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ քաղաքացի Ալինա Ենգոյանի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՍՊ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**